Արձանագրություն N 2
Առողջապահության նախարարության կարիքների համար անհրաժեշտ ՀՀ ԱՆ «Սիսիանի բժշկական կենտրոն» ՓԲԸ վերակառուցման աշխատանքների նկատմամբ որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայության ձեռքբերման նպատակով «ՀՀ ԱՆ ԳՀԾՁԲ-2021/20» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան «23» «հուլիսի» 2021թ.
ժամը 10:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ Գևորգ Սիմոնյան
Հանձնաժողովի անդամներ Կարեն Խաչատրյան,
Սմբատ Սմբատյան (բացակա),
Հարություն Վարդանյան,
Արամ Գրիգորյան
Հանձնաժողովի քարտուղար Միհրան Համբարձումյան

1. Ընթացակարգի հայտերի բացման մասին

(Գ. Սիմոնյան)

Ընդունել ի գիտություն, որ «ՀՀ ԱՆ ԳՀԾՁԲ-2021/20» ծածկագրով գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել երկու կազմակերպություն.

Անվանում	Էլեկտրոնային հասցե	ՀՎՀՀ
«Հուսալի Կամար» ՍՊԸ	husali-kamar@mail.ru 094 019955	09811047
«ՍՈՒՐԳԵՎ» ՍՊԸ	surgev.llc@mail.ru 041 251111	00868322

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

2. Ծրարների ներկայացման մասին

(Գ. Սիմոնյան)

Մասնակցի կողմից ներկայացված ծրարը կազմված է հրավերի պահանջներին համապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

3. Տվյալներ՝ բացված յուրաքանչյուր ծրարում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին

(Գ. Սիմոնյան)

Մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերում առկա են որոշակի անհամապատասխանություններ՝ մասնավորապես.

«Հուսալի Կամար» ՍՊԸ

Մասնակցի կողմից չեն ներկայացվել հրավերով պահանջվող լիցենզիայի և լիցենզիայի ներդիրները:

«ՍՈՒՐԳԵՎ» ՍՊԸ

Մասնակցի կողմից չի ներկայացվել մասնակցի նմանատիպ փորձառությունը հավաստող նախկինում պատշաճ կատարված պայմանագրի պատճենը:

Մասնակցի կողմից ներկայացված Հավելված 1.1-ին կցված չեն մասնագետների գրավոր համաձայնությունները ծառայությունները մատուցելու վերաբերյան և նշված մասնագետների որակավորումները հավաստող փաստաթղթերի պատճենները

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով «ՀՀ ԱՆ ԳՀԾՁԲ-2021/20» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի 8.9 կետը՝ մասնակիցներին առաջարկվում է ծանուցման պահից մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել վերոնշյալ թերությունները:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

4. Հայտերի գնահատման մասին

(Գ. Սիմոնյան)

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ. թիվ 526-Ն որոշման 32-րդ կետի 21-րդ ենթակետը, որոշվեց մասնակիցների կողմից ներկայացված հայտերի գնահատման համար սահմանել 3 աշխատանքային օր:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

5. Գնային առաջարկների մասին

(Գ. Սիմոնյան)

Ստորև ներկայացվում է մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկները.

Անվանում	Սահմանված առավելագույն գին	Գնային առաջարկ՝ առանց ԱԱՀ	Գնային առաջարկ՝ ներառյալ ԱԱՀ
«Հուսալի Կամար» ՍՊԸ	27.000.000	25.500.000	25.500.000
«ՍՈՒՐԳԵՎ» ՍՊԸ		27.000.000	27.000.000

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

6. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը,

ժամը և վայրը հաստատելու մասին

(Գ. Սիմոնյան)

«ՀՀ ԱՆ ԳՀԾՁԲ-2021/20» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստ հրավիրել 2021թ. հուլիսի 28-ին ժամը 15:00-ին, ք. Երևան, Կատավարության տուն 3 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

Հանձնաժողովի նախագահ	_____	Գևորգ Սիմոնյան
Հանձնաժողովի անդամներ	_____	Կարեն Խաչատրյան
	_____	Հարություն Վարդանյան
	_____	Արամ Գրիգորյան
Հանձնաժողովի քարտուղար	_____	Միհրան Համբարձումյան